Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի 2019թ. ընթացքում կատարած հիմնական աշխատանքների

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մարզպետարանը 2019 թվականի ընթացքում իր աշխատանքային գործունեությունն իրականացրել է՝ համաձայն ՀՀ Արարատի մարզպետարանի կանոնադրության, աշխատանքային ծրագրի և 2017-2025 թվականների մարզի զարգացման ռազմավարության իրականացման 2019 թվականի գործունեության ծրագրի:

2019 թվականի ընթացքում Արարատի մարզպետարանում ստացվել է 13665 փաստաթուղթ, որից «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով մուտքագրվել է 13622 և 43 փաստաթուղթ՝ թղթային տարբերակով: Դրանցից 3381-ը ստացվել է վերադաս մարմիններից, նախարարություններից և այլ գերատեսչություններից, 7552-ը՝ տեղական ինքնակառավարման մարմիններից և այլ կազմակերպություններից, այդ թվում՝ ՏԻՄ-երից ստացված իրավական ակտերի փաթեթներ /թղթային 43 հատ/, 2689-ը՝ քաղաքացիներից ստացված դիմումներ, բողոքներ և առաջարկություններ:

Վերադաս մարմիններ և այլ կազմակերպություններ են հասցեագրվել 12608 փաստաթուղթ, որոնք առաքվել են էլեկտրոնային, սուրհանդակային ծառայության միջոցով, փոստով:

Քարտուղարության կողմից նախապատրաստվել և տարբեր գերատեսչություններ են ուղարկվել պարբերաբար ներկայացվող տեղեկատվություններ /մարզխորհրդի նիստերի արձանագրություններ /թվով 4 հատ/, քաղաքացիներից ստացված նամակների, քաղաքացիների ընդունելության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություններ, հաշվետվություններ, տեղեկանքներ /:

Հաշվետու ժամանակահատվածում, համաձայն սահմանված կարգի, յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը /ամիսը 4 անգամ/, կատարվել է թվով 427 քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը մասնակցած քաղաքացիները մարզպետին են դիմել հիմնականում ֆինանսական, կրթական, առողջապահական, աշխատանքային, գյուղատնտեսական, բնակարանային, հողային, իրավական և այլ բնույթի հարցերով:

2019 թվականի ընթացքում իրականացվել է մարզպետի կողմից ստորագրված 186 որոշումների, 318 կարգադրությունների և գլխավոր քարտուղարի կողմից ստորագրված 511 հրամանների հաշվառման, դրանց բնօրինակների պահպանության և առաքման հանձնելու աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարվել է 9 մրցույթ՝ մարզպետարանի ենթակայության ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար:

Թափուր պաշտոնների վերաբերյալ պաշտոնական կայքում տեղադրվել են հայտարարություններ և 37 անձի հետ կնքվել են ժամկետային աշխատանքային պայմանագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետարանում նշանակվել է 12 ծառայողական քննություն:

2019 թվականին մարզպետը ունեցել է 62 այց մարզի համայնքներ՝ բնակիչների հետ հանդիպման, հրատապ հարցերի քննարկման, սուբվենցիոն ծրագրերին ծանոթանալու, նոր կառույցների բացմանը մասնակցելու, կրթական եւ այլ կազմակերպություններ ճանաչողական այցի եւ այլ նպատակներով:

ՏԻ և ՀԳՄ հարցերով բնագավառ

2019 թվականին մարզի 34 համայնքներում իրականացվել են իրավական և մասնագիտական հսկողություն՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ:

Նշված ժամանակահատվածում անց է կացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար նախատեսված 34 մրցույթ, որի արդյունքում հաղթող են ճանաչվել 32-ը: 2019 թվականի ընթացքում ատեստավորվել են 86 համայնքային ծառայողներ, վերապատրաստվել են՝ 120-ը:

Ինչպես նաև սեփական կարողությունների զարգացման նպատակով վերապատրաստվել են մարզի թվով 74 համայնքի ղեկավարներ և ավագանու անդամներ:

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ճշգրտվել են համայնքների քաղաքացիական պաշտպանության պլանները: Մարզպետի որոշմամբ հաստատվել է մարզում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանը:

Մարզում արտակարգ իրավիճակների ոլորտը կարգավորելու նպատակով 2019 թվականի ընթացքում ընդունվել են թվով 7 նորմատիվ իրավական ակտեր: Սահմանված կարգով կազմվել և

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել ՃԿՊԱ-ում վերապատրաստվողների ցանկը / 49 հոգի/: Պատշաճ աշխատանքներ են իրականացվել 2019 թվականի ձմեռային զորակոչի անցկացման ուղղությամբ:

Ֆինանսական բնագավառ

2019 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցների ֆինանսավորումն ըստ ոլորտների ունի հետևյալ պատկերը.

Ֆինանսավորման ոլորտը	2019թ. Ճշտված բյուջե (հազ. դրամ)	2019թ. Դրամարկղային ծախս դրամ)	Կատա-րումը (%)
Մարզպետարանի աշխատակազմ	596544.6	562397.7	94.27
Մարզպետարանի տեխնիկական հագեցվածության բարելավում	4053.5	3076.5	75.89
Կրթություն, այդ թվում	7284286.2	7276045.5	99.88
Հանրակրթության ծրագիր	6815000.3	6809904.2	99.92
Ներառականկրթություն	353712.4	351177.7	99.28
Նախադպրոցականկրթություն	104369.5	103759.6	99.41
Սոցիալապես անապահով ևսահմանամերձ ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	199.8	199.8	100
Ատեստավորման միջոցով որակավորում ստացածուսուցիչներին հավելավճարի տրամադրում	11004.2	11004.2	100
Մշակույթ, այդ թվում	49157.0	45171.54	91.89
Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	21304.2	17753.17	83.33
Մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում	2181.6	1747.17	80.08
Ազգային ,փողային լարային նվագարանների գծով ուսուցում	25671.2	25671.2	100
Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ	62415.0	61623.3	98.73
Այլ ընտրանքային աշխատանքային ծառայություն	480.0	480.0	100
Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին	23542.8	17491.92	74.29
Պետական հիմնարկների ևկազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	290766.9	284415.57	97.81
Այլընտրանքային աշխատանքային ծառայություն/1654 որոշում/	150.0	150.0	100
Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին տարերային աղետների հետևանքով պատճառված վնասների մասնակի փոխհատուցում/1835 որոշում/	1913.8	1913.8	100
Լավագույն մարզական ընտանիք մրցույթի անցկացման համար մարզական հագուստ ձեռք բերելու նպատակով աջակցության տրամադրում/1333որոշում/	570.0	570.0	100
Կոլեկտրադրենաժային ցանցերի տեխնիկական վիճակի բարելավում /ԱրարատՈԿՖ/822 որոշում/	65607.7	26100.9	39.78
Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում/810որոշում/	2400.0	2400.0	100
ՀՀ մարզերին սուբվենցիաների տարամդրում ենթակառուցվածքների զարգացման նպատակով/որոշումներ/	560765.5	352926.99	62.93
ԸՆԴԱՄԵՆԸ	8942653.0	8634763.72	96.55

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ՀՀ պետական բյուջեով 2019թ.մարզի համայնքներին նախատեսված 4 մլրդ 625 մլն. 428.4 հազ. դրամ դոտացիաները հատկացվել են ամբողջությամբ:

Համայնքների բյուջեները ընդհանուր եկամուտների մասով կատարվելեն 101.4 %-ով, իսկ սեփական եկամուտները՝ 108.4%-ով կամ 404.2 մլն դրամով ավել նախորդ տարվանից, 247.9մլն դրամ տարեկան նախատեսվածից:

ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել ՀՀ Արարատի մարզպետարանի համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունները, տեխնիկատնտեսական ցուցանիշները և ամփոփ հաշվետվությունը: ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել նաև ՀՀ Արարատի մարզպետարանի, մարզպետարանի համակարգում առկա պետական ոչ առևտրային կազմակեպությունների և մարզպետարանի միջոցով պետական պատվերի շրջանակներում

ֆինանսավորվող ոլորտների բյուջետային ծախսերի և պարտքերի վերաբերյալ 2018 թվականի տարեկան, 2019 թվականի եռամսյակային հաշվետվությունները:

Կազմվել և գլխադասային մարմիններին են ներկայացվել 2020-2022թթ. Պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի և 2020թ.բյուջետային ֆինանսավորման հայտերը:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հանձնարարականի համայնքներից ընդունվել, ամփոփվել և սահմամված կարգով ներկայացվել է մարզի համայնքների 2019թ. Հաստիքների և աշխատավարձի ֆոնդերի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը: Այն տեղադրվել է նաև մարզպետարանի կայքում: Համայնքներից ընդունվել են գույքային հարկերի ծանուցագրերի և անդորրագրերի 2019թ. հայտ պահանջագրերը, 2018թ. ընթացքում օգտագործված գույքային հարկերի ծանուցագրերի և անդորրագրերի վերաբերյալ հաշվետվությունները, ամփոփվել և սահմանված կարգով և ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Վարչական վերահսկողություն է իրականացվել մարզի 34 համայնքներում:

ՀՀ կառավարության 13.02.2003թ. թիվ 192-Ն որոշմամբ սահմանված կարգի, համայնքներից յուրաքանչյուր ամիս ընդունվում, արխիվացվում, ամփոփվում և էլեկտրոնային եղանակով մարզի գույքահարկի հաշվառման ավտոմատացված տեղեկատվական համակարգի տեղեկությունները եռամսյակի ավարտից հետո հաջորդ ամսվա մինչև 15-ը ներկայացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: ՀՀ Ֆինանսների նախարարություն է ներկայացվել 2018թ-ին տարեկան և 2019թ. ըստ եռամսյակների կատարված գնումների վերաբերյալ հաշվետվությունները: ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել 2020-2022թթ. Միջնաժամկետ հեռանկարում ՓԲԸ-ների կանխատեսումները: ՓԲԸ-ներից ընդունվել է 2018թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռները, հաշվետվությունները և շահութաբաժինների վերաբերյալ առաջարկությունները, որը ամփոփվել և ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարութուն:

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառ

Մարզում մեծ թափ է առել ինտենսիվ այգիների հիմնումը: 2019թ առաջին կիսամյակում ավարտվեցին Երասխ համայնքում «Գրին-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ևս 40հա ծիրանի, կեռասի, խնձորի այգու կառուցման աշխատանքները: Ներկա պահին մարզում կա 94.18 հա գործող ինտենսիվ այգի, որի մեջ մտնում են «ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցություն» ծրագրով մարզի Ազատավան՝ 4.5հա և Արմաշ՝ 7.3հա համայնքներում հիմնված ինտենսիվ այգիները: Հիմնման համար սուբսիդավորված վարկը կազմել է 146 մլն 850.286 հազար դրամ: Տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 6 մլն 108.726 հազար դրամ: Քաղցրաշեն համայնքում ընթացքի մեջ են 45 հա խաղողի ինտենսիվ այգու հիմնման աշխատանքները:

Ներտնտեսային ոռոգման համակարգերի վերականգնման շրջանակներում մարզում 2019թ. հրատապ ծրագրով 11 համայնքներում կատարվել է՝ 250 մլն դրամի, սուբվենցիոն ծրագրով 5 համայնքներում՝ 170 մլն դրամի, Ուրբան ծրագրով 3 համայնքներում՝ 90 մլն դրամի և ՀՀ պետական բյուջեով 150 մլն դրամի ներտնտեսային ոռոգման համակագերի վերականգնման աշխատանքներ՝ ընդհանուր 660 մլն դրամ արժողությամբ:

«Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման» ծրագրի շրջանակներում մարզի 6 /Նոր-Կյանք, Արտաշատ, Պ.Սևակ, ք. Վեդի, Լուսաշող, Այգեզարդ/ համայնքների 73.0 հա հողերում ներդրվել է կաթիլային ոռոգման համակարգ: Տրամադրված վարկի ընդհանուր գումարը կազմել է 136 մլն 584,4 հազար դրամ, սուբսիդավորման գումարը կազմել է 19մլն 969,311 հազար դրամ, փոխհատուցվել է 576,874 հազար դրամ: Ներկայումս մարզում կան 794.42 հա կաթիլային ոռոգմամբ տարածքներ՝ անցյալ տարվա 499.5 հա-ի փոխարեն:

2019թ. շարունակվեցին Վեդու ջրամբարի կառուցման աշխատանքները, ներդրվել է 7.7մլրդ դրամ:

2019թ դեկտեմբերի 1-ի դրությամբ «ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» և «ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրերով մարզ է ներկրվել 49 գյուղտեխնիկա և սարքավորումներ, որի համար տրամադրվել է 514 մլն 779.3 հազար դրամ: Վարկը սուբսիդավորվել է 15 մլն 187 հազար դրամով:

2019թ ագրովերամշակման ոլորտին մթերումների նպատակով տրամադրվող սուբսիդավորված վարկ ստացել են ընդամենը 35 շահառու՝ 4 մլրդ 92մլն 446.15 հազար դրամ: Դեկտեմբերի 1-ի դրությամբ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող սուբսիդավորված վարկ ստացել են հավաստագիր ունեցող 1137 տնտեսվարող՝ 4 մլրդ 65.165 մլն դրամ ընդհանուր գումարով: Ներդրումները հիմնականում կատարվում են անասնապահության զարգացման, ջերմոցային տնտեսություններ և ինտենսիվ այգիներ հիմնելու վրա: 2019թ մասնավորի կողմից համապատասխանաբար ներդրվել են 1.2 մլրդ, 1.346 մլրդ և 2.04 մլրդ դրամ: Անցնող տարում ավելացել են ջերմոցային տնտեսությունների թիվը: Եթե 2018 թվականին դրանք կազմել են 320 հա, ապա 2019 թվականին դրանց թիվն ավելացել է՝ կազմելով 360հա :

Սառնարանային տնտեսությունների թիվն ավելացել է 30 հատով, որով ընդհանուր հզորությունը դարձել է 18300 տ: Սառնարանների քանակի և հզորության ավելացման համար ներդրվել է 290.0 մլն դրամ:

Մարզում առկա են գյուղատնտեսության ոլորտի վերամշակող 41 ձեռնարկություններ, որոնցից 34-ը՝ բուսաբուծական /24-ը՝ խաղող մթերող, 10-ը՝ պտուղ-բանջարեղեն մշակող/, 7-ը՝ կաթնամթերքի արտադրության: 2019թ-ին 18 ձեռնարկություններում խաղողի մթերումը կազմել է 78380տ՝ 2018թ-ի 62620-ի դիմաց: 6 պտուղ-բանջարեղեն վերամշակող ձեռնարկությունների մթերումը ընդհանուր առմամբ կազմել է 33431 տ՝ 2018թ-ի 18782 տ-ի դիմաց:

Սոյայի արտադրութան համար մարզ է ներկրվել 50.0 մլն դրամի գյուղատնտեսական տեխնիկա, ագրոտեխնիկական միջոցառումներ են կատարվել Բուրաստան համայնքի նախկինում չմշակվող 120 հա հողերի վրա: Ցրտահերկը կատարված է:

Մարզի չմշակվող հողերում կատարվել է 200հա-ից ավել բամբակի ցանք:
Սուրենավանի չրարտադրության համար տարվա ընթացքում մեր և հարակից մարզերից մթերել են 550տ միրգ, որից ստացվել է 80տ չիր: Չիրն արտահանվում է հիմնականում ՌԴ և Ուկրաինա: Հայաստանում վաճառվում է շատ քիչ, որպես ներկայացուցիչ: Նոր խարբերդ համայնքում «Ֆայն Ֆուդ» ՍՊԸ-ն «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրով» կազմակերպում է էկոլոգիապես մաքուր չորամրգերի արտադրություն: Կանխիկ 17.314 մլն դրամ ներդրումով, որից 16.833մլն դրամը դրամաշնորհ է, իրականացվել է գործող չրերի արտադրամասի արտադրական հզորությունների վերազինում : Նույն ծրագրով Սիփանիկ համայնքում ձկան վերամշակման «Վեների ԻՄՄՕ» ՍՊԸ-ն 28.520 մլն դրամ կանխիկ ներդրումով, որից 24.047մլն դրամը դրամաշնորհ է, վերազինել է արտադրամասի էլեկտրասնուցման համակարգը նոր սարքավորումներով:

Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների անխափան իրականացման համար պետական բյուջեից հատկացվել է 41.0մլն դրամ:

2019թ մարզում գործող «Ոսկե կացին» անասունների սպանդանոցում կատարվել են ներդրումներ 242.5 մլն դրամի չափով՝ սպանդանոցին կից մասնաշենք կառուցելու և խոզաբուծություն հիմնելու համար: Աշխատանքներն ավարտվել են:

2019թ-ին շարունակվել են գյուղացիական տնտեսություններին Էկոնոմիկայի նախարարության նորարարությունների և մոնիթորիգի գյուղատնտեսության վարչության Արարատի մարզային բաժնի կողմից մատուցվող խորհրդատվական ծառայությունների տրամադրումը: Բաժնի կողմից իրականացվել է 85 ծրագրային դասընթաց, որին մասնակցել են 2366 ֆերմեր, հավաստագիր են ստացել՝ 2320ը:

2019 թվականի հունվար - հունիս ժամանակաշրջանում մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար ներդրվել է 13մլրդ 584մլն դրամ, որի արդյունքում ոլորտում ստեղծվել է 2716 աշխատատեղ:

«Ընկերության կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն Արարատ քաղաքին տրամադրվել է սուբվենցիայի գումար 3124.4 հազար դրամ, որի միջոցով կառուցվել է 417 գ.ծ.մ. ոռոգման ջրագիծ:

«Մելիորացիա» ՓԲԸ-ի կողմից մարզի 13 համայնքներում կատարվել է կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման աշխատանքներ 94.1 կմ, 141.2 մլն դրամի սահմաններում:

ԱՄՆ ՄԶԳ ԳԱՏՕ ծրագի միջոցով և համայնքի մասնակցությամբ կատարվել է .

Հովտաշատում խորքային հորի օպտիմալացման ծրագիր՝ 21 մլն դրամի չափով:

Ընթացքի մեջ է Վեդի քաղաքի ոռոգման և Փ. Վեդի գյուղի ոռոգման ծրագրերը:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցին հարակից Ուրցաձոր խոշորացված համայնքում ընթացքի մեջ է «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում» ծրագրի իրականացումը:

Հայաստանի Հանրապետության Արարատյան դաշտում հողերի չեզոք դեգրեդացիայի գաղափարի իրականացման ծրագրի շրջանակներում Արարատի մարզի Նարեկ համայնքում հիմնվել է 30.21 հա պտղատու այգիներում կաթիլային ոռոգման համակարգ, որից 10.5 հա-ը նորատունկ այգի: Կատարվել է 10.5 հա հողերի բարելավում կենսահումոսով պարարտացման եղանակով, իսկ մնացած 20.1 հա-ի համար նախատեսված կենսահումոսը պահեստավորվել է համայնքում, գարնանը աշխատանքները շարունակելու համար: Իրականացվել է 4.73 հա ճանապարհների եզրով ծառերի տնկում և կաթիլային ոռոգման համակարգի կառուցում:

Քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառ

2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ Արարատի մարզում 2018թ. համաշինարարական 22 հրատապ ծրագրերի իրականացման համար նախատեսվել է 395.086,100 մլն դրամ, որից ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդից՝ 365.822,800 մլն դրամ. մնացած 29.263,300 մլն դրամը կազմում է համայնքների ներդրումը:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքների տարածքներում հայտնաբերվել են 8 ինքնակամ շինության դեպք, որոնցից 2-ի ընթացքը կասեցվել , իսկ 6-ը օրինականացել է:

ՀՀ Արարատի մարզպետարան է ներկայացվել հողի գործառնական նշանակության փոփոխության 15 փաթեթ՝ որից 6-ին տրվել համաձայնություն, 8-ը վերադարձվել է լրամշակման, 1-ը մերժվել է քաղաքաշինության կոմիտեի կողմից:

2018 թվականին գույքագրած 27 աղբավայրերից 2019թ. ընթացքում մնացել են 22-ը: Տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի թիվը 2630-ից հասցվել է 2682-ի: Աղբահանության ինքնածախսածածկման ուղղությամբ կիրառված միջոցառումների շնորհիվ 2018 թվականի եկամուտ-ծախս հարաբերակցությունը 55 %-ի դիմաց 2019 թվականին կազմել է 58.0%:

Մշակվել է մարզում աղբահանության և սանմաքրման ծրագրի հայեցակարգը: 2019թ. ընթացքում որպես աղբահանության եկամուտ հավաքագրվել է 261.7 մլն.դ.,իսկ ծախսը կազմել է 451.1 մլն.դ. :

2019 թվականին մարզում եղել է 58 սուբվենցիոն ծրագիր 43 համայնքներում՝ընդհանուր 1,5 միլիարդ ՀՀ դրամ արժեքով:

2019 թվականի կառավարության առաջնահերթ լուծում պահանջող ծրագրով մարզի 22 համայնքներում իրականացվել են բազմաթիվ կարևոր ծրագրեր՝ 415 մլն դրամ ընդհանուր արժեքով: Դրանք են՝ 11 համայնքում՝ ոռոգման ցանցի անցկացում և վերակառուցում, 8 համայնքում՝ խմելու ջրագծի կառուցում և վերակառուցում, 1 համայնքում՝ մանկապարտեզի տանիքի վերանորոգում, 2 դպրոցում՝ ջեռուցման համակարգի կառուցում:

Հրատապ ծրագրերով իրականացված աշխատանքներն արդեն ավարտված են:

Կարևոր խնդիր է լուծվում նաև Արարատի Զոդ Բանավան թաղամասում, որտեղ իրականացվել են փակ դրենաժի կառուցման աշխատանքները՝ 81,0 մլն դրամ ծրագրային ընդհանուր արժեքով:

Մարզի 4 համայնքում բացվել են մանկապարտեզներ՝ Ռանչպարում (Բարերարի ջանքերով), Աբովյանում (Տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով), Վերին Դվինում (Բարերար-համայնք ջանքերով), Դաշտաքարում (Տարաքային զարգացման հիմնադրամի միջոցներով)

Վերաբացվել է 2 մանկապարտեզ՝ Կանաչուտ և Դիտակ համայնքներում:

Ամբողջությամբ հիմնանորոգվել է նաև Այգավանի մանկապարտեզը՝ Տարածքային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Գրեթե ավարտին է մոտեցել Խարբերդի դպրոցի կառուցումը: Այն աշակերտների առաջ իր դռները կբացի արդեն 2020 թվականի ընթացքում:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ

2019 թվականին ՀՀ Արարատի մարզում գտնվող միջպետական, հանրապետական, մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհներին ընդհանուր առմամբ կատարվել է 3 մլրդ 997 մլն 241.4 հազ դրամի նորոգման, պահպանման և շահագործման աշխատանքներ, որից՝

- ՀՀ պետական բյուջեի միջոցներով – 2 607 853.5 հազ դրամ
- Ասֆալտապատում և հիմնանորոգում – 2 088 730.2 հազ դրամ
- Մարզի ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում - 519 123.3 հազ դրամ
- ՀՀ պետական և համայնքային բյուջեների միջոցներով – 372 590.2 հազ դրամ
- ՀՀ պետական բյուջեի կողմից մարզերում ենթակառուցվածքների բարելավման նպատակով սուբվենցիա տրամադրվող ծրագրերի շրջանակներում կատարած աշխատանքներ –372 590.2 հազ դրամ
- Համաշխարհային բանկի ֆինանսավորում - 805 497.7 հազ դրամ
- Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավում ծրագրով – 805 497.7 հազ դրամ
- Համայնքային բյուջեների միջոցներով- 211.3 մլն դրամ:

Առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառ

2019 թվականի Արարատի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհաստատություններում գրանցվել է 1873 ծնունդ, ծնվել է 1885 երեխա / 12 զույգ/, որից՝ 993 տղա և 892 աղջիկ:

Հետևողական աշխատանքներ են տարվում ստվերային գործունեության վերացման ուղղությամբ : «Արտաշատի ԲԿ», «Մասիսի ԲԿ», «Վեդու ԲԿ», «Արարատի հիվանդանոց ԲԿ» և «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ներում ավելացել են համավճարով և վճարովի ծառայությունների մուտքերի գումարները, որոնք ուղղվել են առողջապահական հիմնարկների նյութատեխնիկական բազայի հարստացմանը և բուժսպասարկման որակի բարձրացմանը:

Մարզի առողջապահական կազմակերպություններում 2019 թվականի մուտքերը կազմել են 695 737.6 հազ. ՀՀ դրամ, նախորդ տարվա համեմատ ավելանալով շուրջ երկու անգամ:

Տարիների ընթացքում կուտակած պարտքերն են մարել «Արտաշատի ԲԿ», «Վեդու ԲԿ», «Արարատի հիվանդանոց ԲԿ» ՓԲԸ-ները:

2019 թվականին մարզում մատուցվող բժշկական ծառայությունների ցանկը համալրվել է անոթային, պլաստիկ, էնդոկրին վիրաբուժության և մանկական ինֆեկցիոն ծառայություններով:

2019 թվականի մայիսին «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ում գործարկվել է մարզի առաջին համակարգչային տոմոգրաֆը /KT/: 2019 թվականի օգոստոս ամսին «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ն ձեռք է բերել «Shtorc» ֆիրմայի լապորոսկոպիկ սարքը: 2019 թվականի սեպտեմբեր ամսից համակարգչային տոմոգրաֆիան, ինչպես նաև էխոկարդիոգրաֆիան և մամմոգրաֆիան «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ում իրականացվում են նաև պետական պատվերի շրջանակներում:

2019 թվականին կազմակերպվել է 33 քաղաքացիների առողջարանային վերականգնողական բուժումը, որոնցից 15 երեխաներ իրենց խնամողներով՝ Ջերմուկի «Արարատ» մոր և մանկան առողջարանում:

Առողջապահական շատ խնդիրների լուծման նպատակով քաղաքացիներին տրամադրվել է անհրաժեշտ ֆինանսական աջակցություն:

2019թ. նպաստառու ընտանիքների ամսական միջին թիվը կազմել է 7287, 2018թ.՝ 7489 ընտանիք:

Սոցիալական սպասարկման համակարգում իրականացվող ծրագրերի կառավարման բարելավումը հնարավորություն կտա հստակեցնել և ճիշտ հասցեական դարձնել մարզում փաստագրված ընտանիքների թիվը:

ՀՀ կառավարություն 06.12.2018 թվականի թիվ 1419 որոշման համաձայն թարմացվել են մարզում հաշվառված զոհված զինծառայողների 28 ընտանիքների գործերը, համապատասխանեցվել են սահմանված կարգին և ներկայացվել բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողովի քննարկմանը: 5 ընտանիք ստացել է դրական եզրակացություն:

Մարզի տարածքում բնակվող զոհված ազատամարտիկների, ծնողազուրկ և բազմանդամ, սակավ ապահովված ընտանիքների 450 երեխաներ ամռան ընթացքում անվճար հանգստացել են Հանքավանի ճամբարներում:

Համագործակցելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ մարզի 272 հաշմանդամ քաղաքացիները ապահովվել են վերականգնողական և տեխնիկական պարագաներով՝ պրոթեզներ, օրթեզներ, հաշմանդամության սայլակներ, ձեռնափայտեր, լսողական ապարատներ և այլն:

2019 թվականի ընթացքում մարզի զբաղվածության տարածքային գործակալություններում գրանցվել են 2621 գործազուրկ՝ որից 944-ը տեղավորվել են աշխատանքի: Զբաղվածության 4 տարածքային կենտրոնների աջակցությամբ մշտական աշխատանքի են տեղավորվել 28 հաշմանդամներ:

Մարզում ներդրվել է նաև «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, այծաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար աջակցության տրամադրման» ծրագիրը: Մարզում այս ծրագրի 60 շահառու ունենք:

Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառ

Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներում 2019-2020 ուսումնական տարում 35308 աշակերտով կոմպլեկտավորվել է 1681 դասարան: Աշակերտների թիվն անցած ուսումնական տարվա համեմատ ավելացել է 1259-ով, իսկ դասարանների թիվը՝ 29-ով: Դասարանների միջին խտությունը մարզում կազմում է 21 աշակերտ:

Դպրոցներում աշխատում են 2863 ուսուցիչներ և մանկավարժական աշխատողներ, 1589 վարչական, ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողներ:

Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներում անցած ուսումնական տարում կրթություն է ստացել 34049 աշակերտ: 2851 աշակերտ ավարտել է 9-րդ, 1212-ը՝ 12-րդ դասարանները:

2019 թվականի հունվար ամսին քննարկվել, ընդունվել են մարզային ենթակայության հանրակրթական դպրոցների տարիֆիկացիոն ցուցակները: Մարզի դպրոցներից ընդունվել, ամփոփվել և ԿԳՆ է ներկայացվել դպրոցների կոմպլեկտավորումները:

Մարզի դպրոցներում մարզպետի համապատասխան որոշումներով հաստատվել են դպրոցական խորհուրդների կազմերը:

Համակարգվել է մարզի 24 դպրոցներում առաջացած տնօրենների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների կազմակերպման աշխատանքները: Արդյունքում 9 դպրոցներում տնօրենները վերընտրվել են, իսկ 15 դպրոցներում ընտրվել են նոր տնօրեններ: Մրցույթների գործընթացը բոլոր դպրոցներում անցել են սահմանված կարգի համաձայն:

Դպրոցական սնունդ ծրագրի շրջանակներում մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և դպրոցներին կից գործող նախակրթարանների 15198 երեխաների տրվում է դպրոցական սնունդ:

Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներից ներառական կրթություն իրականացնելու իրավունք ունեն 24-ը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 609 երեխաներ ստանում են ներառական կրթություն: Պարբերաբար իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառում և գնահատում:

2019 թվականի ընթացքում դպրոցներին են բաշխվել 1-4-րդ դասարանների 68458 դասագիրք, 2200 ուսումնամեթոդական գրականություն, 1711 դասամատյան, ԴՇՀ-ի միջոցով տպագրված 84000 դասագիրք: Ծնողների կողմից կատարվել է պլանավորված 108,02 մլն. դրամի ներդրում, որը փոխանցվել է դասագրքերի շրջանառու հիմնադրամի դպրոցների բանկային ենթահաշիվներին: Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերով ապահովելու նպատակով պետության կողմից դրամաշնորհի ձևով մարզի դպրոցներին 2019-2020 ուսումնական տարում տրամադրել է 11,5 մլն դրամ գումար: Սահմանամերձ Պարույր Սևակի, Տիգրանաշենի և Երասխի դպրոցներում սովորող երեխաների դասագրքերը տրվել են անվճար: Պետության կողմից այդ երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման համար տրամադրվել է շուրջ 704 հազար դրամ գումար:

2019թ. մայիս ամիսներին կազմակերպվել և անցկացվել է դպրոցականների առարկայական օլիմպիադա: Դպրոցական փուլին մասնակցել է շուրջ 8000 աշակերտ, տարածքային փուլին՝ 1596 աշակերտ, մարզային փուլին՝ 397 աշակերտ: Օլիմպիադայի

հանրապետական փուլի արդյունքներով 1 աշակերտ արժանացել է I կարգի դիպլոմի, 4-ը՝ II կարգի, 6-ը՝ III կարգի դիպլոմների, 14-ը գովասանագրերի:

2019 թվականի մայիս ամսին մարզի հանրակրթական դպրոցների 11-րդ դասարանների աշակերտների համար անց են կացվել ռազմադաշտային պարապմունքներ:

ԿԳ նախարարությունից ստացվել և դպրոցներին է բաշխվել 1212 ատեստատ, որից մեկը գերազանցության, 2851 վկայական, որից 21-ը հատուկ նմուշի:

Համակարգվել է 9-րդ դասարանի հայոց լեզվի միասնական քննությունների կազմակերպման աշխատանքները: Վերահսկվել է ավարտական քննությունների անցկացման աշխատանքները:

Մարզում գործում են 81 նախադպրոցական ուսումնական հաստատություններ, որտեղ ընդգրկված են 7038 երեխաներ: 43 մանկապարտեզներ գործում են շուրջտարյա: 2019 թվականի ընթացքում բացվել են նոր մանկապարտեզներ՝ Արարատ քաղաքի, Դաշտաքարի, Վ. Դվինի, Աբովյանի և Ռանչպարի համայնքներում: Վերաբացվել են Կանաչուտի և Դիտակի մանկապարտեզները:

Մարզում բավականին ակտիվ է եղել նաև մշակութային և սպորտային կյանքը:

Մեծ միջոցառումներ են կազմակերպվել Պարույր Սևակի ծննդյան 95-ամյակի, Վազգեն Սարգսյանի ծննդյան 60-ամյակի առիթներով: Մեծ շուքով նշվել է նաև Քաղաքացու օրը, մարզի բոլոր քաղաքային և գյուղական համայնքներում կազմակերպվել են տոնական միջոցառումներ՝ նվիրված Շուշիի ազատագրմանն ու Հաղթանակի 74-րդ տարդարձին, Անկախության օրվան նվիրված, մարզի բոլոր երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում կազմակերպվել են համերգներ, ցուցահանդեսներ և քննարկումներ՝ նվիրված Կոմիտասի և Թումանյանի 150-ամյակներին, մեծ մասսայանություն վայելեց Ազգային նվագարանների, երգի մրցույթ-փառատոնը:

Մարզի արվեստի, գեղարվեստի և երաժշտական դպրոցների սաները մասնակցել են միջազգային, հանրապետական մրցույթ-փառատոների՝ արժանանալով պատվավոր հորիզոնականներ:Վեջիններս մարզպետի կողմից արժանացել են մրցանակների:

Այս տարի առաջին անգամ անցկացվել է «ՀՀ Արարատի մարզի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև 2019 թվականին ֆուտբոլի առաջնություն մարզպետի մրցանակի համար» մարզական առաջնությունը, որին մասնակցել են 57 դպրոցների հավաքականներ, կայացել են 65 ֆուտբոլային հանդիպումներ:

Մեր մարզիկները հաջողությամբ մասնակցություն են ունեցել նաև Արցախում տեղի ունեցած Համահայկական 7-րդ ամառային խաղերին, հանրապետությունում անցկացված մի շարք մրցաշարերի:

Այս տարի Եվրոպայի առաջնությունում տարբեր սպորտաձևերում նշանակալի հաջողություններ է գրանցել Արարատի մարզի 15 մարզիկ:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

Համայնքների հետ տարվող հետևողական աշխատանքի արդյունքում, հաշվետու ժամանակահատվածում համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից վարձակալության է տրամադրվել 2250 հա:

Հաշվետու ժամանակահատվածում Արարատի մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժին ,,Mulberry,, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով մուտքագրվել է շուրջ 2100 փաստաթուղթ, բաժնին մակագրված բոլոր փաստաթղթերին սահմանված ժամկետներում տրվել է համապատասխան ընթացք:

Մարզպետարան այցելած քաղաքացիների կողմից բարձրացված հարցերին տրվել է համապատասխան մասնագիտական աջակցություն, անհրաժեշտության դեպքում կատարվել են լրացուցիչ ուսումնասիրություններ:

Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բնագավառ

ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացրել ՀՀ Արարատի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունից բխող 2018 թվականի գործունեության ծրագրի մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվությունը և 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը:

ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ՀՀ Արարատի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունից բխող 2019 թվականի գործունեության ծրագիրը, որը հաստատվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի կողմից և 2020 թվականի գործունեության նախնական ծրագրի նախնական տարբերակը:

2019 թվականի մայիսի 4-ին կազմակերպվել է ,,Իմ քայլը հանուն Արարատի մարզի,, ներդրումային-բիզնես ծրագրերի համաժողովը և տեղական արտադրանքի EXPO ցուցահանդեսը: ներդրումային-բիզնես համաժողովին ներկայացված ներդրումային ծրագրերից 3-ը՝ գյուղմթերքի մեծածախ շուկայի, տեխնիկական մշակաբույսերի արտադրության (սոյա) և ինտենսիվ այգիների հիմնում (գ.Նարեկ) ծրագրերը գտնվում իրականացման փուլում:

Արտաշատ քաղաքում հիմնվել «Արտ պրոդուկտ» պտուղ-բանջարեղենի վերամշակման մինի գործարանը, որը սկսել է գործել սույն թվականի նոյեմբերից և իր ամբողջ ծավալով աշխատելու դեպքում կապահովի շուրջ 80 աշխատատեղ:

Մարզերում զբոսաշրջության ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման շրջանակներում Տարածքային զարգացման հիմնադրամի և Համաշխարհային Բանկի ռեսուրսներով 1-ին փուլով իրականացվում է Խոր Վիրապ վանական համալիրի հարակից հատվածում գտնվող կայանետեղի, կից ճանապարհների բարեկարգում և կանաչապատում:

2019թ.-ին ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուվբենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության են արժանացել և իրականացվել համայնքների կողմից ներկայացված 82 ծրագրային հայտերից 58-ը:

2019թ.-ին, ըստ նախապես սահմանված պլան-ժամանակացույցի, մարզի թվով 34 համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտներում :

2019 թվականի ընթացքում մարզպետարանում կազմակերպվել է հանդիպումներ ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան ներկայացուցիչների և գործարարների հետ:

Հուլիսի 19-ից 21-ը Արարատի մարզում են հյուրընկալվել Գիլան նահանգի Կասպից ծովի թառափ ձկնատեսակի միջազգային հետազոտական ինստիտուտի (International Sturgeon research institute) պատվիրակությունը: Արարատի մարզ կատարած այցից հետո իրանական կողմը ներկայացրել է առաջարկներ, որոնք և հավանության են արժանացել մեր կողմից:

Մարզպետարանը աջակցություն ցուցաբերել և անմիջական մասնակցություն է ունեցել ՀՀ միջազգային պայմանագրերով, միջազգային կառույցների կողմից մարզում իրականացվող տնտեսական ծրագրերին, մասնավորապես ՀՏԶՀ, ՀԲ, USAID, Ասիական զարգացման բանկ, ֆրանսիական զարգացման բանկ միջազգային վարկային և հասարակական կազմակերպությունների կողմից մարզի տարածքում իրականացվող ծրագրերին:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառ

Հաշվետու ժամանակահատվածում թարմացված տվյալների շտեմարանի համաձայն հաշվառվել են՝ առանց ծնողական խնամքի մնացած՝ 1, միակողմանի ծնողազուրկ՝ 27, հաշմանդամ՝ 83 երեխա, երեք և ավելի երեխա ունեցող ընտանիքներ՝ 59: 36 երեխաների համար սահմանվել են խնամակալություն և հոգաբարձություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին տրվել է 271 վկայագիր:

Մարզում կա 48 իրավախախտ, որոնց հետ աշխատելու համար նշանակվել են հասարակական դաստիարակներ: Հայտնաբերվել են ընտանեկան բռնության 197 դեպքեր:

Ներքին աուդիտի բնագավառ

2019թ. դրությամբ պլանավորվել և իրականացվել է 36 միավորում ներքին աուդիտ, որից՝ 24 ուսումնական հաստատություններ, 9 առողջության առաջնային պահպանման կենտրոններ և 3

բժշկական կենտրոներ, իրականացվել է գնումների ընթացակարգի աուդիտ 1-4-րդ եռամսյակ, գնումների պայմանագրերի աուդիտ առաջին և երկրորդ կիսամյակ:

Միավորների կառավարչական կազմակերպչական գործավարական և ֆինանսատնտեսական գործառույթներում հայտնաբերվել են թերություններ, բարձր ռիսկային գործառույթներ և օրենսդրական ակտերի խախտումներ: Միավորների ղեկավարներին արվել են 203 առաջարկություններ:

Որոշ միավորներում հայտնաբերվել է անաշխատունակության նպաստների վճարների սխալ հաշվարկներ և աշխատավարձերի սխալ հաշվարկներ, ինչի հետևանքով ավել վճարված գումարների՝ դեպի բյուջե հետգանձման վերջնաժամկետներ են սահմանվել, ինչպես նաև դեպի բյուջե հետ գանձում է կատարվել 364788 ՀՀ դրամ: 2019 թվականի ընթացքում կայացել է ներքին աուդիտի հաշվետվությունների քննարկման թվով 9 կոմիտեի նիստ, որի արդյունքում որոշում կայացված բարձր ռիսկային գործառույթները, ներքին աուդիտի ենթարկված միավորներից՝ «Վեդու Բ/Կ» ՓԲԸ, «Մրգավետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բյուրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Եղեգնավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Մխչյանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի և «Հովտաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հանձնված են համապատասխան իրավապահ մարմիններին, որից ,,Մրգավետի միջնակարգ դպրոց,, ՊՈԱԿ-ի քրեական գործով վարույթը կարճվել է և բյուջե է վերականգնվել 295000 ՀՀ դրամ, մյուսների մասով նախաքննությունը շարունակվում է:
Հայտնաբերված թերությունները, խախտումները և բարձր ռիսկային գործառնությունները շտկելու և բացառելու ուղղությամբ նշված միավորներում իրականցվել է վերստուգման գործընթաց:

Աուդիտի ենթարկված միավորները նախատեսված ժամկետում վերացրել են արձանագրված շեղումները և բացթողումները :

Իրավական բնագավառ

Մարզպետարանի իրավաբանական բաժնում 2019 թվականին ուսումնասիրվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունած 15695 իրավական ակտ, որից 3250-ը՝ ավագանու որոշում, համայնքի ղեկավարի՝ 10099 որոշում և 2346 կարգադրություն:

Զորահավաքային նախապատրաստության բնագավառ

Արարատի մարզի զորահավաքային նախապատրաստության ծրագրի հիմնական միջոցառումները 2019 թվականի ընթացքում կատարվել են լրիվ ծավալով, բացառությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցներ պահանջող աշխատանքներից:

2019 թվականի մարտ-հունիս ամիսներին մարզի թվով 10 խոշոր համայնքներից յուրաքանչյուրի զորահավաքային մարմինների անձնակազմերի հետ կազմակերպվել են պարապմունքներ՝ պլանավորված ժամկետներում և ծառայել են համայնքների զորահավաքային մարմինների անձնակազմի պատրաստության բարելավման նպատակին:

Համաձայն 2019 թվականի մարզի զորահավաքային նախապատրաստության ծրագրի, կազմակերպվել և իրականացվել են թվով երեք շտաբային մարզումներ, որոնցից մեկը համատեղ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ, մյուս երկուսը՝ առանձնացված:

Վարչական ստուգումների ընթացքում մեթոդական օգնություն է ցուցաբերվել մարզի համայնքների քաղաքացիական պաշտպանության պլանների վերամշակման, ճշգրտման աշխատանքներին:

Զորահավաքային զորակոչին նախապատրաստվելու նպատակով բաժնի կողմից կազմակերպվել են մարզի զորահավաքային ռեսուրսների ճշգրտման աշխատանքները: Համայնք-զինկոմիսարիատ օղակում ճշգրտվել են կցագրված անձնակազմի ու տեխնիկայի որակական ու քանակական կազմը:

Տարվա ընթացքում ճշգրտվել են նաև մարզպետարանի ստորաբաժանումների խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման պլանները: Բաժնի կողմից աշխատանքներ են տարվել զորահավաքային նախապատրաստության ոլորտում իրավական դաշտի բարելավման գործընթացում: